

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՎԱՂԵՄԻԱ
ՀՐ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

Սեյյեդ Մեհդի Ահմադի

Սարիի տեղանունները

Ժ.02.06 – «ԱՄԻԱՅԻ ՀԻՆ ԵՎ ՆՈՐ ԼԵԶՈՒՆԵՐ (իրանագիտություն)»
մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2012

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական
համալսարանում:

Գիտական ղեկավար` բանասիրական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Գ. Ս. Ասատրյան

**Պաշտոնական
ընդդիմախոսներ`** բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Ս. Լ. Խաչիկյան

բանասիրական գիտությունների թեկնածու
Թ. Կ. Չարյան

**Առաջատար
կազմակերպություն`** Վ. Բրյուսովի անվ. պետական լեզվաբանական
համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2012թ. ապրիլի 30-ին՝ ժամը 14:00-ին ՀՀ
ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի հիստորիոստում գործող ԲՈՀ-ի 019
Լեզվաբանության մասնագիտական խորհրդի նիստում (հասցեն՝ Երևան 0015,
Գրիգոր Լուսավորչի փ. 15)

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան
լեզվի հիստորիոստի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2012թ. մարտի 29-ին:

Մասնագիտական խորհրդի գիտքարտուղար,
բանասիրական գիտությունների թեկնածու

Ն. Մ. Սիմոնյան

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը:

Իրանի իսլամական հանրապետության Մազանդարան նահանգի Սարի անվամբ աշխարհագրական տարածքի տեղանունների ուսումնասիրությունը սկսվել է դեռևս 19-րդ դարում, երբ այնպիսի նշանավոր գիտնականներ, ինչպիսիք են Հ. Հյուբշմանը¹ և Յ. Մարկվարտը², իրենց հետազոտություններում քննության են առել Իրանի և հարակից տարածքների մի շարք տեղանուններ: 20-րդ դարում այս աշխատանքները, բացի եվրոպական հետազոտողներից, շարունակեցին իրանցի հեղինակները (Ա. Քասրավի, Էն. Ռեզա և այլք), որոնք հաճախ ոչ գիտական կամ նկարագրական հունով շարադրված գործեր են: Սարիի տեղանունների վերաբերյալ առկա բուն լեզվական քննությունները, կարելի է ասել, համակարգված բնույթ չեն կրում և զիջում են պատմական ու աշխարհագրական ուսումնասիրություններին:

Մազանդարան նահանգի Սարի շահրեստանի տեղանունների քննությունը կարևորվում է տարածքի էթնիկ բնութագիրը՝ ինչպես ժամանակի, այնպես էլ տարածության մեջ, լեզվական ու պատմական նկարագիրը վեր հանելու առումով: Այլ կերպ ասած՝ Սարիի տեղանունների ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս վեր հանել այստեղ երբևէ բնակված ժողովուրդների հետքերը կոնկրետ շրջաններում ու պատմական փուլերում՝ հարստացնելով պատմության շտեմարանը նոր նյութերով, թույլ է տալիս վերականգնել այս տարածքի լեզվական իրական պատկերը: Միով բանիվ, Սարիի տեղանունների քննությունը այդ տարածքի լեզվական, նաև՝ էթնիկ պատմության կամ էթնոգենեզի առաջնակարգ աղբյուր է հանդիսանում, ինչով էլ պայմանավորված է այս ատենախոսության **արդիականությունը**:

Աշխատանքի նպատակն ու խնդիրները:

Սույն ատենախոսության **նպատակն** է Սարիի տեղանունների ծագումնաբանական, իմաստաբանական, բառակազմական քննության միջոցով վեր հանել տարածքի բնականունների լեզվական որոշարկման խնդիրները, որոշարկել տեղանվանակազմական տիպը ու բառակազմական ձևերը:

Այս նպատակն իրագործելու համար փորձել ենք լուծել հետևյալ առաջադիր խնդիրները.

1) գրանցել ու ներկայացնել Սարիի բնականունների ցանկը:

¹Hübschman, H. 1969, Die Altarmenischen Ortsnamen, Indogermanische Forschungen, Bd. XVI, h. 3, Straßburg, 1904, repr. Amsterdam, 351 p.

²Markwart, J. 1901, Ērānšahr, Berlin, 1109p.

2) առկա նյութը ենթարկել ծագումնաբանական ու իմաստաբանական համաժամանակյա և տարաժամանակյա վերլուծության:

3) ղիտարկել Սարիի տեղանունների ենթաշերտային, բնիկ, օտար շերտերը:

4) իրականացնել Սարիի բնականունների բառակազմական քննություն:

5) որոշարկել Սարիի բնականունների տեղանվանակազմական տիպը:

6) քննել Սարիի բնականուններն ըստ բնույթի, ըստ հատկանիշային կազմության:

7) ռումնասիրել Սարիի տեղանունների բառակազմական ձևայիններն ու հիմնաբառերը:

8) առանձնացնել Սարիի բնականունների հիմնական շերտերը՝ իրանական, թյուրքական, արաբական, ուշ և էթնոտեղանունները:

9) ներկայացնել Սարիի բնականունների հիմնական անվանացանկն ու իրանական ծագման տեղանվանահիմքերի բառարանը:

Աշխատանքի գիտական նորույթը:

Սարիի տեղանվանական համակարգը չի ենթարկվել լեզվաբանական քննության և այս ոլորտում կատարված յուրաքանչյուր աշխատանք կոչված է ներկայացնելու տարածքի բնականունների էթնոլեզվական իրավիճակը:

Ատենախոսության մեջ առաջին անգամ ամփոփ կերպով ներկայացվել է Սարիի տեղանվանական համակարգը՝ բառակազմական օրինաչափություններով ու բաղադրիչների առատությամբ:

Առաջին անգամ փորձ է կատարվել ծագումնաբանական քննության ենթարկել բնականունների հիմնաբառերն ու բառակազմական ձևայինները, դասակարգել տեղանուններն ըստ բնույթի ու հատկանիշային կազմության:

Բառակազմական քննության միջոցով որոշարկվել է Սարիի բնականունների տեղանվանակազմական տիպը ու դրա տեղը տեղանվանագիտության մեջ:

Բազմաթիվ բնականուններ ներկայացվել են պատմական համատեքստում՝ անվանադրման պատմական պատճառաբանվածությամբ ու ճշգրտումներով:

Ներկայացվել է Սարիի տեղանունների հիմնական շերտերը՝ նախաիրանական, իրանական, օտար, որտեղ իր քանակով գերակայում է իրանական շերտը: Տեղանվանական միավորները դասակարգելով ըստ ծագման և տարածման արեալի, ունենք հետևյալ պատկերը՝ ա) հնագույն շրջան-սուբստրատային նախաիրանական տեղանուններ, բ) հին շրջան-միջին իրանական ծագման տեղանուններ, գ) նոր շրջան (XI-XVIII դդ.)-պարսկական, արաբական և թյուրքական տեղանուններ:

Առանձին բաժնում ներկայացվել է իրանական ծագման հանգաբառարանը՝ իմաստային ու ծագումնաբանական հավելումներով, ինչը կարող է Իրանի և հարակից տարածքների տեղանունների ուսումնասիրության բնագավառում համեմատական նյութ հանդիսանալ:

Աշխատանքի կիրառական նշանակությունը (գործնական ու տեսական արժեքը):

Գործածության մեջ է դրվել Սարիի բնիկ տեղանունների անվանացանկը՝ նախաիրանական, վաղ, ուշ անունները ներառյալ: Հիշյալ անվանացանկի մեջ տեղ գտած բոլոր միավորները ենթարկվել են ստուգաբանության և, մասամբ, պատմական մեկնաբանության, ինչն իր կարևոր նշանակությունն ունի և անթոխարինելի տեսական նյութ տալիս թե իրանական, թե հարակից տարածքների տեղանվանագիտական ուսումնասիրությունների համար, ինչով էլ հիմնավորվում է աշխատանքի **տեսական** նշանակությունը:

Կատարված ուսումնասիրությունների հիման վրա արված եզրահանգումները՝ տեղանունների կառուցվածքի, լեզվանյութի և պատմահամեմատական բնութագրի վերհանում, կնպաստեն Սարիի լեզվական, էթնո-դեմոգրաֆիական նկարագրի վերականգնման և օտար էթնիկ տարրի տոկոսային ներկայության որոշարկմանը հիշյալ տարածքում: Որոշարկված բնականվանակերտ ձևայինները, տեղանվանական շերտերը, համաժամանակյա կտրվածքով հնարավորություն են ստեղծում նոր տեղանուններ կազմելիս հարազատ մնալ տվյալ լեզվի էությանը, ստեղծել տրամաբանական ու հնի հետ ներդաշնակ նոր տեղանվանական ենթահամակարգ, որն էլ համարվում է աշխատանքի **գործնական** արժեքը:

Աշխատանքի մեթոդաբանական հիմքը:

Տեղանունների ուսումնասիրությունը կատարվում է ժամանակային երկու մոտեցմամբ՝ համաժամանակյա և տարժամանակյա, ինչն իրականացվել է սույն հետազոտության մեջ: Առաջին դեպքում քննության են առնվել տարածքի տեղանունները որոշակի ժամանակային կտրվածքում: Երկրորդ դեպքում ուսումնասիրվել է այդ անունների պատմական զարգացման ընթացքը՝ մասնավորապես լեզվաբանական տեսանկյունից:

Ելակետային մեթոդ է հանդիսացել նկարագրական մեթոդը, որի միջոցով հավաքվել, դասակարգվել են Սարիի տեղանունները:

Կառուցվածքային մեթոդով քննության են առնվել արդեն դասակարգված տեղանունների առանձին խմբեր և ենթախմբեր՝ ըստ բաղադրիչների, ըստ այդ բաղադրիչների փոխհարաբերության:

Իմաստաբանական մեթոդով ուսումնասիրվել են տեղանունների կազմության առանձին տարրերի իմաստային ոլորտները:

Տեղանվանագիտական ուսումնասիրություններում անհրաժեշտաբար պետք է նաև պատմական մոտեցում, ինչը կիրարկված է ատենախոսության մեջ:

Վիճակագրական վերլուծության միջոցով տրվում են տեղանվանական ձևերի տարածվածության, տարբեր շրջաններում դրանց քանակային հարաբերակցության սահմանները, պատմահամեմատական մեթոդի

տվյալների ի մոտո կիրառմամբ լուսաբանվում են տեղանունների ստուգաբանության ու ծագումնաբանության խնդիրները:

Աշխատանքի ժամանակագրական սահմանները:

Ժամանակագրական առումով ատենախոսության նյութ է հանդիսացել ժամանակակից Իրանի Սարի շահրեստանի տեղանունները, որոնք դիտարկվել են տարժամանակյա կտրվածքով ու պատմական մոտեցմամբ:

Աշխատանքի փորձաքննությունը:

Աշխատանքի մի շարք խնդիրներ ու դրույթներ ուսումնասիրվել ու լուսաբանվել են հանրապետական գիտական «Orentalia» ժողովածուի, Տաջիկստանի ԳԱ «Ахбори», նաև՝ «American Journal of Scientific Research» հանդեսի էջերում հեղինակի լույս ընծայած հոդվածներում:

Աշխատանքը քննարկել ու պաշտպանության են երաշխավորել ԵՊՀ Արևելագիտության ֆակուլտետն ու իրանագիտության ամբիոնը:

Աշխատանքի կառուցվածքն ու հիմնական բովանդակությունը:

Ատենախոսության հիմնական մասը կազմված է ներածությունից, թվագրված ներթափանցներից կազմված երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից: Բացի այս, ատենախոսությանը կից ներկայացված են հավելվածներ, որոնցից առաջինը Սարիի տեղանունների իրանական ծագման տեղանվանահիմքերի բառարանն է, իսկ երկրորդը՝ Սարիի բնականունների անվանացանկը:

Սկզբնաղբյուրների և գրականության համառոտ տեսություն:

Սարիի տեղանվանական համակարգի ուսումնասիրությունը գտնվում է իր նախնական փուլում և ներկայացվող ատենախոսությունը, թերևս, այս բնագավառում կատարված եզակի հետազոտություններից է:

Ատենախոսության համար սկզբնաղբյուր է ծառայել հեղինակի կողմից հավաքած դաշտային նյութը: Թերևս կարևոր աղբյուր կարելի է համարել Իրանի Իսլամական Հանրապետության զինված ուժերի Գլխավոր շտաբի աշխարհագրական վարչության հրատարակած՝ երկրի բնակավայրերի հանրագիտական լիակատար աշխարհագրական բառարանը՝ 138 հատոր, որի նյութը կազմել է ներկա ատենախոսության հիմքը: Աշխատանքի համար աղբյուր է ծառայել նաև իրանցի աշխարհագետ Աբբաս Ջաֆարիի հրատարակած Իրանի աշխարհագրական հանրագիտարանը: Այս հանրագիտարանի առաջին հատորը վերաբերում է Իրանի տարածքում գտնվող լեռներին ու լեռնաշղթաներին, երկրորդ հատորը՝ գետերին և երրորդը՝ բնակավայրերին: Մինևույն ժամանակ, ըստ հարկի, ներառնվել են նաև նյութին

առնչվող պարսիկ և արաբ պատմիչների և աշխարհագրագետների համապատասխան երկերում առկա տվյալները:

Ատենախոսության մեջ օգտագործվել են հայերեն, ռուսերեն, անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն և պարսկերեն տարաբնույթ աշխատություններ ու ուսումնասիրություններ:

ՆԵՐԱՄՈՒԹՅՈՒՆ

Նախաբանից հետո, որտեղ արծարծվում է տեղանվանագիտության ընդհանուր խնդիրները և Սարիի տեղանունների ուսումնասիրության արդիականությունը, ներածության մեջ ընդհանուր գծերով ներկայացվում է պատմաաշխարհագրական համառոտ ակնարկ Մազանդարանի և մասնավորապես Սարի շահրեստանի վերաբերյալ:

Առանձին ենթաբաժիններով ներկայացվում է Սարիի աշխարհագրական դիրքը, պատմական բնութագիրը:

Սարի շահրեստանը՝ Սարի կենտրոնով, Իրանի հյուսիսային Մազանդարան նահանգի կենտրոնն է: Մազանդարանը ձգվում է Կասպից ծովի հարավային գոտու երկայնքով՝ մոտ 480 կմ երկարությամբ և 70-110 կմ լայնությամբ՝ 23756/4 քառ. կմ տարածքով: Բացի ծովեզերքին հարող նեղ հովտաշերտերից, որոնք շատ են նեղանում, և արևելքում, և արևմուտքում, նահանգի մնացած մասը լեռնոտ է ու անտառածածկ: Էլբուրսի լեռնաշղթան, ձգվելով ծովափին գուգահեռ, անջրպետի դեր է կատարում, իսկ դեպի ծովը խոյացած լեռնագագաթները տարածքը բաժանում են բազում հովիտների, որոնք ձգվում են դեպի հյուսիս: Նահանգը հարավում սահմանակցում է Թեհրան և Սեմնան, արևմուտքում՝ Գիլան և Ղազվին, արևելքում՝ Գոլեստան նահանգներին: Մազանդարանն ունի 16 շահրեստան՝ Ռամսար, Թանքաբոն, Չալուս, Նոուշահր, Նուր, Մահմուդ Աբադ, Ամոլ, Բաբոլսար, Բաբոլ, Ղայեմշահր, Մավադքուհ, Ջուբար, Սարի, Նոքա, Բեհշահր, Գալուգահ, 51 քաղաք, 44 շրջան, 113 դեհեստան և 3161 գյուղ: Սարի շահրեստանը՝ Սարի կենտրոնով, հյուսիսում սահմանակից է Կասպից ծովին, հարավում՝ Էլբուրսի լեռնաշղթային ու Սեման նահանգին, արևելքում՝ Նեքա և Բեհշահր և արևմուտքում՝ Ղայեմ Շահր, Ջուբար և Մավադքուհ շահրեստաններին:

Սարին վարչականորեն բաժանված է հետևյալ մասերի՝ 5 շրջան, 5 քաղաք, 15 դեհեստան՝ 470 գյուղ, որից 24-ը դատարկ են, 446-ը՝ բնակեցված:

Սարի շահրեստանի հինգ շրջան-բախշերը են՝

1. Կենտրոնական շրջան /Baxš-e Markazi/
2. Միյանոուդի շրջան /Baxš-e Miyānrūd/
3. Չհարդանգեի շրջան /Baxš-e Čhārdange/
4. Դոդանգեի շրջան / Baxš-e Dodānge/
5. Քալիջան Ռաստադի շրջան / Baxš-e Kālijān-e Rostāq/:

Առաջին հիշատակումները, որոնք վերագրվում են Սարիին, վերաբերվում է Սասանյանների շրջանին՝ այդ քաղաքի տարածքը հայտնի է եղել Zādrāgārtā

անվամբ: Իսկ Արշակունիների ժամանակաշրջանին վերաբերող դրամների վրա արձանագրված Syrix անունը, ըստ որոշ գիտնականների, նույնական է Սարիի հետ, որտեղ նաև, ըստ ամենայնի, կտրել են այդ դրամները: Սասանյաններից հետո Թաբարեստանում իշխանության եկան Դաբույանները: Արդեն նրանց իշխանության տարիներին Մազանդարանի կենտրոնը դարձավ Սարին: Սարին վերջին անգամ դարձավ Մազանդարանի կենտրոնը Փեհլեվիների շրջանում և մնում է մինչ այսօր:

Ներածության շրջանակներում ներկայացվում է իրանական և մասնավորապես Սարիի տեղանվանագիտության պատմությանը:

Անդրադառնալով Սարի տեղանվան պատմությանն ու հիշատակություններին, նշվում է, որ չնայած Սարի անվան ծագումնաբանության մասին եղած տեսություններին, այս անունը դասվում է դժվար ստուգաբանելի տեղիների թվին:

ԳԼՈՒԽ I. Սարիի տեղանունների իմաստաբանական ու կառուցվածքային քննությունը (Ենթագլուխեր 1.1 – 1.4)

Սարիի տեղանվանական համակարգը բազմաշերտ է՝ ա) ըստ լեզվական ծագման և բ) ըստ ստեղծման ժամանակի: Սա նշանակում է, որ այս տարածքի տեղանունները ստեղծվել են՝ ա) տարբեր էթնոլեզվական և բ) տարբեր պատմական ու սոցիալ-մշակութային միջավայրերում: Առաջին հանգամանքը պայմանավորված է անվանադիր հանրության էթնոլեզվական պատկանելությամբ, իսկ երկրորդը՝ սոցիալ-պատմական զարգացման աստիճանով: Առաջին դեպքում լեզվական հիմքը անպայմանորեն տարբեր է, իսկ երկրորդ դեպքում այն կարող է և նույնը լինել:

Սարի տեղանվանական համակարգում հստակորեն տարրորշվում են նախաիրանական, զուտ իրանական և օտարածին շերտերը, որոնց ճշգրիտ ծագումնաբանական ու ստուգաբանական վերլուծությունը թույլ է տալիս որոշարկել, որ Սարիի տեղանվանական համակարգում գերակայում է իրանական շերտը: Թյուրքական, մոնղոլական, ինչպես նաև արաբական շերտի ներթափանցումը այս տարածքի տեղանվանական համակարգ պայմանավորված պատմական իրադարձություններով և գերակշռող մաս չի կազմում:

1. Ըստ ծագման Սարի տեղանունները բաժանվում են՝
 - ա) նախաիրանական շրջանից ավանդված անուններ.
 - բ) զուտ իրանական տեղանուններ՝ ներառյալ բարբառային ձևերը.
 - գ) ուշ տեղանուններ
 - արաբական
 - թյուրքական
 - հիբրիդային:

2. ըստ բնույթի Սարիի տեղանունները բաժանվում են՝

ա) տեղանուններ, որոնք լեզվական և իմաստային տեսակետից միանգամայն թափանցիկ ու հասկանալի են: Ընդ որում, դրանց մեծ մասը ժամանակագրական առումով նոր անուններ են,

բ) տեղանուններ, որոնք ունեն պատմական անցյալ, ժամանակի ընթացքում ենթարկվել են հնչյունափոխության, կամ կրում են այնպիսի արխայիկ բառամիավորներ, որոնք այժմ դուրս են մղվել գործածությունից,

գ) տեղանուններ, որոնք ժամանակի և տարածության մեջ ենթարկվել են հնչյունափոխության և իմաստափոխության,

դ) տեղանուններ, որոնք ունեն օտար ծագում, սակայն ենթարկվելով իրանական լեզվական օրինաչափություններին, որոշակի փոփոխություններ են կրել,

ե) բարբառային բառաձևերով կազմված տեղանուններ: Այս ձևերը Սարիի տեղանվանական համակարգում գերակշիռ մաս են կազմում հատկապես բուսանուններից, կենդանիների անուններից կազմված անունները,

զ) օտար և իրանական ձևակազմիչներով հիբրիդային տեղանուններ:

3. ըստ հատկանիշի կազմության Սարիի տեղանունները կարելի է բաժանել հետևյալ խմբերի՝

1. Տեղանուններ, որոնց հիմքում ընկած են տեղանքի ֆիզիկաաշխարհագրական հատկանիշները:

2. Տեղանուններ, որոնց հիմքում ընկած են բուսանուններն ու կենդանիների անունները:

3. Իմաստային առումով առանձնանում են այն տեղանունները, որոնց հիմքում ընկած են հասարակական և տնտեսական երևույթները: Դրանց թվին են պատկանում էթնոնիմներից, տարածված զբաղմունքի անուններից կազմված տեղանունները: Էթնոտեղանունները բաժանվում են երեք խմբի՝ նախաիրանական, իրանական և օտար տեղանուններ:

4. Տեղանունների մի խումբ էլ առաջացել է անձնանուններից, այս բնակավայրերը կոչվել են հիմնադրի անվամբ կամ որևէ անվանի մարդու պատվին:

5. Տեղանունների մի խմբի հիմքում էլ ընկած են պաշտամունքային եզրերն ու երևույթները:

4. բառակազմության տեսանկյունից, ինչպես լեզվի սովորական բառերը, Սարիի տեղանունները բաժանվում են.

- 1) Պարզ տեղանուններ,
- 2) Բարդ կամ հարադրավոր տեղանուններ,
- 3) Ածանցավոր տեղանուններ. Սարիում տարածված բնականվանակերտ ածանցները ըստ ծագման բաժանվում են հետևյալ խմբերի.
 - իրանական – պարսկական, բարբառային

- արաբական
- թյուրքական:

Ըստ բնույթի բնականվանակերտ ձևայինները բաժանվում են.

- Բառային իմաստից գուրկ միավորներ, որոնք ունեն առաջին հերթին գոյականակերտ ածանցի նշանակություն, սակայն տեղանուններում հաճախակի կիրառության արդյունքում ձեռք են բերել տեղանավանակերտ ածանցի գործառույթ՝ «տեղ, վայր» իմաստով, հմմտ.՝ -ak/-āk, -i և այլն:
- Ինքնուրույն բառի կարգավիճակ ունեցող միավորներ՝ աշխարհագրական եզրեր ու բնական երևույթների անուններ են, որոնք, կրկին տեղանուններում հաճախակի կիրառության արդյունքում, ձեռք են բերել երկրորդական ձևային գործառույթ «տեղ, վայր» նշանակությամբ, հմմտ.՝ -āb, -deh, -rostāq և այլն:
- Արխաիկ ու բարբառային ձևեր, որոնք տեղանվանական համակարգում ձեռք են բերել ձևակազմիչ միավորի նշանակություն, հմմտ.՝ -xūnī «աղբյուր» (մանիքեական միջին պրսկ. xānīg «աղբյուր», քրդ. kānī, պրսկ. kān «հանք»), -xvāst «կալվածք» և այլն:

Սարիի տեղանվանակազմության կարևոր առանձնահատկություններից է այն, որ իրանական բնիկ տեղանվանակերտ ածանցներից շատերը, չնայած իրենց տարածվածությանը Իրանի ողջ տարածքում, այստեղ չեն հանդիպում, նշենք՝ -gerd/-jerd < h. իր. *kar- «անել, կառուցել» արմատի անցյալ դերբայի *kṛta-/karta- ձևից՝ «արված, կառուցած», -band/-vand < h. իր. *banda- < *band- «կապել» արմատից, -dār՝ dāstan «ունենալ» բայի ներկայի հիմքը՝ «պարունակող, ունեցող, ընդգրկող» նշանակությամբ:

Սարիի տեղանունների կազմության ամենակենսունակ բնականվանակերտ ձևայինները հետևյալներն են՝ -āb, -ābād, -ak, -ān, -bān/-vān, -bār, -bar, -ben, -čāl, -dān, -dar, -darre, -dašt, -deh, -gāh/-gah, -gar, -ik, -kəlā/ -kelā/ -kolā/ -qalā/ -kalāya, -Kand, -keti, -keš, -kūh, -mahalle, -marz, -Rud, -sār / -sar, -u, -var/-vār, -verd, -xandaq, -xāne, -xāni/-xuni/-xānik/-xunik, - xvār, -xvar, -xvāst, -xeyl:

4) Բաղադրյալ տեղանուն–բառակապակցություն:

ԳԼՈՒԽ II. Սարիի տեղանունների ծագումնաբանական քննությունը (Ենթաբաժնիներ 2.1.1 – 2.1.5)

2.1 Իրանական ծագման տեղանուններ: Սարիում իրանական ծագման տեղանունները թվով գերակայում են՝ ներառյալ հին և նոր բնականունները: Հին շրջանին բնորոշ են միջին իրանական ծագման տեղանունները, իսկ նոր շրջանը (XI-XVIII դդ.) պարսկական անուններն են: Այդ բնականունները տեղակայված են Սարիի ողջ տարածքում:

Իրանական ծագման են Սարիի բոլոր հինգ շրջանների ու դրանց ղեկեստանների անունները: Այսպես *Asfiuverd-e Šurāb*-ը Կենտրոնական շրջանի ղեկեստաններից է: Այն ունի 33 գյուղ, որոնք բոլորն էլ բնակելի են: Դեկեստանի անվան առաջին մասը նշանակում է «սպիտակ գյուղ», կազմված է *Asfi*- «սպիտակ» և *-verd* «գյուղ» նշանակությունն ունեցող ձևայիններից: *Šurāb* ձևի երկրորդ բաղադրիչը *-āb* «ջուր» ձևն է, իսկ *-Šur* ձևայինն ունի «աղի» իմաստը: Դեկեստանի անունը կարող ենք մեկնաբանել «աղի ջրի՝ գետի, կողքին գտնվող գյուղ»: Այստեղ մենք պետք է նաև ենթադրել, որ «սպիտակ» հատկանիշի ընտրությունը կապված է «աղի ջրի» արդյունքում առաջացած հողի սպիտակ շերտի գոյության հետ: Միանոռուի շրջանի առաջին ղեկեստանն է *Ɔnūhγawzup*: Այն ունի 20 բնակելի և 2 անբնակ գյուղ: *Kuhdašt* անունն ունի «լեռնոտ բնակավայր» նշանակությունը *Kuh*- «լեռ» և *-dašt* «դաշտ»: Չհարդանգե շրջանի առաջին ղեկեստանը կոչվում է *Garmāb*: Այս ղեկեստանն ունի 35 բնակելի գյուղ, իսկ Գառմաբ տեղանունը նշանակում է «տաք ջուր», որը պայմանավորված է այստեղ տաք, բուժիչ բնական ջրերի առկայությամբ *garm*- «տաք» և *-āb* < h. իր. *apa- ձևից: Դողանգեի շրջանի ղեկեստաններից մեկը *Šurpīn* է: *Farim*-ը, որն այժմ քաղաքի կարգավիճակ է ստացել, ոչ վաղ անցյալում Դողանգեի փոքր գյուղերից մեկն էր և միայն 1382/2003 թ. դարձավ շրջկենտրոն: *Šurpīn* Փարիմ անվան արաբականացված ձևն է, որի ստուգաբանական քննությունը հանգեցնում է հետևյալ մեկնաբանության՝ *Par*- ձևայինը կարող է հանգել *perd- «դեղին» նախաձևին, հմմտ. սողդ. *Pwrδ*-, ն.պ. *pala* և այլն, իսկ *-im* -ն ունի երկրորդական ձևային գործառնություն և բնականունը նշանակում «դեղին քաղաք, ավան»:

Աշխարհագրական տեղանքով է պայմանավորված **Eslāmdeh-e Balā** և **Eslāmdeh-e Pāiin** գյուղերի անունները: Այս անունները համարվում են ուշ տեղանուններ և բառացի նշանակում են «խլամական գյուղ» համապատասխանաբար՝ Վերին և Ներքին: Գյուղերի նախկին անունները եղել են *Šahfrāy-e Balā* և *Šahfrāy-e Pāiin*, որոնց առաջին *Šah*- բաղադրիչը, ընդհանրապես, տեղանուններում ունի երկու իմաստ: Առաջին դեպքում այն կարող է նշանակել «շահ, արքա», այսինքն շքեղ, գլխավոր, հզոր, կամ շահական, շահի կողմից կառուցված և հանգում է մ. պ. *Šāh*, հ. պ. *xšāyaθiya*- ձևին, մյուս դեպքում այն կարող է ունենալ «սև» նշանակությունը, որը տեղանուններում օգտագործվում է «ծառաշատ, խիտ» իմաստով: Երկրորդ դեպքում *Šah*- ձևը հանգում է հ.ի.ր. *s(i)yāwa- «սև» նախաձևին՝ *s- > *š- անցումով, հմմտ. սողդ. *Šāw*, հյ. *šaw*- «սև», *Šāw*- > *Šah*- զարգացմամբ: Քննարկվող տեղանվան մեջ *Šah*- ձևն ունի «խիտ» իմաստը, քանի որ կապակցության մեջ է մտել մագանդարաներեն *efrāy* «թխկի» ծառանվան հետ: Ըստ ամենայնի, տեղանունը նշանակում է «թխկիներով առատ գյուղ»՝ համապատասխան դիրքային հատկանիշով: **Darik** – այս տեղանունն ունի «ձորում ընկած գյուղ» նշանակությունը: Կազմված է՝ *dar* «ձոր, կիրճ, հովիտ»

միավորից < պրթև.՝ dar նույնիմաստ բառից (> հայ. «դար ու լիս») և -ik տոպոֆորմանտից: -xvāst տոպոֆորմանտով է կառուցված **Šahrxvāst** տեղանունը, որը կարող է հանգել մ. իր. *Xšayaxvāstak- ձևին՝ «մեծ քաղաք» նշանակությամբ: Ռուդեփայե Շոմալի դեհեստանի բնականուններից է **Esbūraz-**ը, որի կազմված է Esbū- և -raz ձևայիններից, վերջինս «այգի» բառամիավորն է > *raza- արմատից (ավեստ.՝ razura-, պրսկ. raz), իսկ Esbū- ձևը, ըստ ամենայնի, հանգում է մ.պ. spōz, spōxtan «ուշացնել, հետաձգել» ձևին, հմմտ.՝ մանիք. պ. 'spwxt, ն.պ. espuz kardan և այլն, իսկ տեղանունն էլ կարող է նշանակել «ուշահաս այգիների գյուղ» կամ «գյուղ, որտեղ բերքը ուշ է հասնում», ինչը շատ հավանական մեկնությունն է: Նշենք նաև, որ առաջին esbū- բաղադրիչն ունի նաև «զամբյուղ, կուժ» նշանակությունը, հմմտ.՝ ն.պ. sabū «զամբյուղ»: Մակայն մեկ ավելի հավանական մեկնաբանություն էլ կա սույն տեղանվան համար, ըստ որի այն հանգում է *aspa-raiča- նախաձևին, որն ունի «ձիերի ասպատակելու ասպարեզ, հրապարակ» իմաստը, հմմտ.՝ մ.պ. asprēs > հայ. «ասպարեզ»: **Dulmarz** տեղանունը այն ածանցավոր անուններից, որը կազմվել է -marz «վայր» ածանցից և dul- բառաձևից, որն, ըստ ամենայնի, dara/darra «կիրճ» բառի հնչյունական կամ բարբառային տարբերակներից է և տեղանուններում ստացել է «վայր, նաև՝ կիրճ, լեռնացք» նշանակությունը: **Xāryek** – այս տեղանունը նշանակում է «լավ, բարենպաստ բնակավայր, գյուղ», կազմված է մազանդ. Xār – «լավ, հարմար տեղ, վայր» միավորից, հմմտ. ավ. Xvāθra- «հաճելի իրավիճակ», պահլավերեն xvār «հեշտ», ն.պ. xvār «լավ հեշտ» < հին իր. *hu-āθra- նախաձևից, և -(y)ek ձևակազմիչից: Հետևյալ երկու տեղանունները **Velāšed**, **Velāškelā**, թվում է ունեն միևնույն հիմնական ձևային, սակայն իրականում դրանք տարբեր ձևայիններ են: Առաջին Velāšed տեղանվան մեջ Velā բաղադրիչն ունի «տարածություն, ընդարձակություն» իմաստը, իսկ -šed ձևն ունի «փայլ, լույս» նշանակությունը: Վերջինս ծագում է հ. իր. xšaita- նախաձևից, որն ունեցել է երկու իմաստ «արքայազն» և «փայլուն»: Դեռևս 1969 թ. հայտնի իրանագետ Գերշնիչը հակադրության մեջ դիտարկեց Yimō ašāto «անհաջողակ Յիմա» և Yimō xšāēto «փայլող Յիմա» ձևերը, որը հիմք տվեց ենթադրելու, որ բազմաթիվ անձնանուններում ու տեղանուններում այն չունի «արքայզն», այլ «երջանիկ, հաջողակ, փայլուն, լավ» իմաստները: Քննարկվող տեղանվան մեջ ևս այս բաղադրիչը նշանակում է «լուսավոր, արևի ճառագայթների տակ գտնվող»: Մյուս Velāškelā տեղանվան Velāš- բաղադրիչը բուսանունն է՝ «ազնվամորի», հմմտ. ն. պ. tamašk, իսկ բնականունն ունի «ազնվամորիով առատ բնակավայր» նշանակությունը: **Sānxeyl** – այս գյուղը գտնվում է Սարիի հարավ-արևելքում, որից 3 կմ հյուսիս հոսում է Թեջեն գետը: Բնականունը կարելի է մեկնաբանել «սրածայր գործիքներ սրողների գյուղ», ինչը հնարավոր է ենթադրել անվան Sān բաղադրիչից, որը նշանակում է «երկաթ կամ քար, որով սրում են դանակ, մկրատ և նման սրածայր գործիքներ»: Այս միավորը ն.պ. մնացել է šān, afsān ձևերով, հմմտ. մ.պ. afsān, ծագում է հ. իր. *abi-sāna- նախաձևից՝ abi-

նախածանցով և *sāna- ծագում է հ.իր. *sā(y)- «սրել» արմատից, հմմտ. ավ. saēni-: **Āsyābsar** – Āsyāb- «ջրաղաց», այս բառը հարավարևմտյան բարբառների քննարկում *θr- > -s- օրինակի հնչյունական զարգացման օրինակ է, որը ծագում է հին իրան. *ar-θra- (*ar- «աղալ, մանրացնել») արմատից, հմմտ. ն.պ. āsyāb «ջրաղաց», և -sar «գլուխ, ծայր» ձևությամբ կազմված բնականուն է, որը կարելի է մեկնաբանել «գլուխի ծայրին ջրաղաց ունեցող բնակավայր»: **Didū** տեղանունը կազմված է didan «տեսնել» < հ. իր. *dai-ta- բայի անցյալի հիմքը՝ *dī-ta- > dīd-, հմմտ.՝ հյ. *Ղէտ* և -u < մ. պ. -ōk վերջածանցից: Ըստ ամենայնի, այս բնականական առաջացման հիմքում ընկած է գլուխի բաժրադիր լինելու հանգամանքը, որը թույլ է տվել այն դիտակետ համարել:

2.2 Արաբական ծագման տեղանուններ: Սարիի տեղանվանական համակարգում, իրանականից հետո, երկրորդ տեղն են զբաղեցնում արաբական ծագման անունները, ինչը պայմանավորված է արաբերենի ու, առաջին հերթին, իսլամի ազդեցությամբ: Սակայն նշենք, այդ ազդեցությունը, այնուամենայնիվ, չի պարտադրել մեծ թվով տեղանունների ներմուծում այս տարածք և գուտ արաբական ծագման անունները բավական քիչ են՝ հիմնականում իրանական և արաբական տարրերի հարադիր ձևեր են: Ներկայացնենք մի քանիսը.

Ասֆիվերդ-ե Շուրաբ դեհեստանի **Terem (Termsāhrah)** տեղանունը հնարավոր է կապված է Terem բառի «նստելավայր» նշանակության հետ, որն ունի արաբերեն ծագում: Ընդ որում, Terem/Tarom է անվանում ժողովուրդը Ղազվինի շրջանը, որը դեռևս 10-11րդ դդ., ըստ արաբ աշխարհագիրներ Յակուտի, Իսթախրիի, Իբն Հաուկայի, կոչվել է Tarm: Եվս մեկ ստուգաբանություն հնարավոր է առաջարկել այս տեղանվան համար, որը կապված է հ. իր. tarma- (հնդեվր. *termo-) «թարմ, խոնավ, թաց», հմմտ.՝ *tarna- > պրսկ. tarr «թաց», իսկ հյ. այլ ածանցով՝ *tarmo- > *թարմ* միավորի հետ: Այս դեպքում գյուղանունը կարող է նշանակել «խոնավ կլիմա ունեցող» գյուղ: **Vāredmahalle** – այս բնականունը երբեմն անվանվում է նաև պարզապես Vāred, որն ունի արաբական ծագում՝ «մուտք» իմաստով: Ըստ ամենայնի, գյուղի անունը մեկնաբանվում է որպես «առաջին գյուղ»: Միայնուդ-ե Բոգորգ դեհեստանի գյուղերից է **Bāyvaḥš** –ը՝ «վայրի այգի», որն, ըստ ամենայնի, ուշ ծագման անուն է, կազմված՝ Bāy- «այգի» և -vaḥš «վայրի»՝ արաբական ծագման բառերից: Գառմաբ դեհեստանի **Elyerd** տեղանունը հիբրիդային անվան օրինակ է: Այն կազմված է արաբ. Ely- «բարօրություն, շնորհ, առատություն» և թյուրք. -Yurd «տուն, բնակատեղի» ձևերից:

2.3 Թյուրքական ծագման տեղանուններ: Թյուրքական ծագման տեղանունները Սարիի տեղանվանական համակարգում շատ քիչ տեղ են զբաղեցնում և հանդես են գալիս հիմնականում հիբրիդային ձևերում: Թյուրքական ծագման ֆորմանտն է ընկած Միայնուդ-ե Բոգորգ դեհեստանի **Ĉemāztappe** բնականական հիմքում: Այս տեղանունը կազմված է Ĉemāz «ձարխոտ» բուսանունից և tappeh «բլուր, բարձունք» բառամիավորից, որը թյուրքերեն tǎpǎ նույնիմաստ բառն է: Տեղանունը նշանակում է «ձարխոտով հարուստ գյուղ, որն, ըստ ամենայնի,

կառուցվել է բլուրների վրա»: Գառմաբ դեհեստանի թյուրքական ծագման տեղանունն է **Šišek** –ը, որի հիմքում ընկած է թյուրքերեն *šiš-* «գիրանալ, ընդլայնվել, մեծանալ, ուռչել» արմատը, հմմտ.՝ Քաշանի բրբռ. *Šišek* «երկու–երեք տարեկան ոչխար», թուրք. *Šišek* «ծնող ոչխար»: Տեղանվան նշանակությունը կապված է գյուղի ընդարձակ, փռված լինելու հանգամանքի հետ:

2.4 Ուշ տեղանուններ: Սարիի տեղանավանական համակարգում մեծ թիվ են կազմում ուշ տեղանունները, ինչը պայմանավորված է արդյունաբերական կենտրոնների, զինվորական ավանների, առողջարանային համալիրների հիմնադրման, ինչպես նաև՝ նոր անվանափոխումների հետ: Ուշ տեղանունների վառ օրինակներ են Միյանտուղ-ե Բոզորգ դեհեստանի հետևյալ անունները՝ **Šerkat-e Sardxâne-ye Sām, Šerkat-e Sahāmi-ye Datš-e Nāz, Šerkat-e Nekačub:** Այս բնակավայրերը և նրանց անվանումները կապված են այդ տարածքներում արտադրական գործարանների կառուցման և այնտեղ աշխատուժ տեղափոխելու գործընթացի հետ: Նման տեղանունների շարքին են պատկանում նաև քննարկվող դեհեստանում գտնվող **Kārxāne-ye Pelastik** «պլաստիկի գործարան», **Forudgah-e Dašt-e Nāz** «Դաշտ–ե Նազի օդակայան» անունները և այլն:

2.5 Էթնոտեղանուններ: Սարի շահրեստանը առանձնանում է էթնոտեղանունների բազմազանությամբ, ինչը խոսում է այն մասին, որ այս տարածքում էթնիկ ու լեզվական բարդ գործընթացներ են կատարվել՝ էթնիկական (էթնոլեզվական) խմբերի ու հանրությունների հերթագայում, միաձուլում, խաչավորում և այլն: Սարիի բազմաթիվ բնիկ տեղանուններ, իրենց մեջ կրելով այս տարածքի հնագույն բնակիչների՝ ամարդների, հիրկանացիների, թաբարների և այլոց մասին հիշողությունը, թույլ են տալիս վերականգնել տարածքի հնագույն շրջանի էթնիկ պատկերը: Միջնադարյան և ուշ միջնադարյան էթնիկ տեղաշարժերը նույնպես արտացոլված են այն բնակատեղանունների մեջ, որոնք մինչ այժմ պահպանում են երբեմնի տերերի անունները:

Սարիի էթնոտեղանունները ըստ ծագման կարելի է բաժանել երեք խմբի՝ նախաիրանական, իրանական և օտար անուններ: Քանակային առումով հատկապես մեծ տեղ են զբաղեցնում իրանական, հետո՝ թյուրքական ցեղանուններից կազմված բնականունները, որոնք ժամանակային առումով ընդգրկում են ուշ միջնադարն ու դրան հաջորդած ժամանակաշրջանը:

Այսպես, բազմաթիվ տեղանունների հիմքում ընկած է քուրդ ցեղանունը, օրինակ՝ **Kordxeyl** – կազմված է՝ *kord-* «քուրդ» և *-Xeyl* «խումբ, ցեղամիավորում, նաև՝ զորք» նշանակությամբ ֆորմանտից, **Lākdašt** – ըստ ամենայնի, կազմված է *Lāk-* ցեղանունից և *-dašt* < մ.պ. *dašt*, ն.պ. *dašt* «դաշտ» տեղանվանակերտ ձևությից, **Gorjipol** – կազմված է՝ *Gorji-* «վրացի» էթնոնիմից և *pol* «կամուրջ»՝ մ.պ. *puhl* < հ.իր. **prt-*, ավ. *pəətu-*, ձևությից, հմմտ.՝ նաև **Gorjikelā: Gūleškelā** –

«գալեշների գյուղ»՝ Galeš- «գալեշ» ցեղանունը և -kelā «ամրոց»՝ հին իրան. *kat- / *čat- < հնդ. եվր. *kot- արմատից «ծածկել» նշանակությամբ: **Barbari** – այս գյուղի բնակիչներն ու հիմնադիրները՝ բարբարները, Սարի են գաղթել Ղաջարական շրջանում Աֆղանստանի ու Իրանի սահմանային Բարբար կոչվող տարածքից: **Juki** – Իրանի ամբողջ տարածքում սփռված գնչուական ցեղերից մեկի՝ ջուկիի անունով, որտեղ, ի դեպ, այժմ էլ ապրում են գնչուներ: **Qalič** – Սարիի հին բնակիչներից են դալիչլու կոչվող թյուրքական ցեղամիավորումը, որոնք հիշատակվել են դեռևս սելջուկների ժամանակաշրջանից: **Gerāyli** – մոնղոլական ծագում ունի անունը, որն, ըստ ամենայնի, Չինգիզխանի հետևորդ տոհմերից մեկի անունն է, որի անունով էլ կոչվում է այդ ցեղախումբն ու բնակավայրը: **Balūčxeyl** – Balūč- «բելուջ» իրանական ցեղունունը և -xeyl տուպոֆորմանտը՝ «բելուջների գյուղ» նշանակությամբ: **Deylam** – Կասպից ծովի հարավային շրջանների բնակիչներն էին, որոնց հետևորդները այժմ հայտնի են «գագա» անունով և կենտրոնացած են հիմնականում Թուրքիայում՝ պատմական «Բարձր Հայքի» արևմտյան հատվածում: Իսկ **Amreh** տեղանունը, ըստ ամենայնի, կապված է տարածքի հնագույն բնակիչներ ամարդների անվան հետ, հմմտ. նան՝ Molik: Սակայն այս դեպքում մենք տեսնում ենք անվան հյուսիսարևմտյան հնչյունական զարգացում, որը թույլ է տալիս *-rd- > -r- անցումը և տեղանունն էլ կարող է նշանակել «ամարդների գյուղ»՝ -e վերջածանցով:

ԳԼՈՒԽ III Սարիի մանրատեղանունները (Ենթազույններ 3.1.1 – 3.1.4)

Մանրատեղանունների ուսումնասիրությունը տեղանվանագիտության այն հատվածն է, որն ուսումնասիրում է համեմատաբար փոքր աշխարհագրական տարածքների անունները, դրանց ծագումնաբանությունը, ստուգաբանությունն ու տարածվածությունը որոշակի տարածքի վրա: Մանրատեղանունը անվանում է փոքրցը, թաղամասը, ավանը, մարգագետինը, արտը, դաշտը, արոտավայրը, անդաստանը և այլն: Սարիի մանրատեղանունները չեն եղել առանձին ուսումնասիրության առարկա: Ժամանակագրական առումով մանրատեղանունները բաժանվում են պատմական և ուշ շրջանի անունների: Բառապաշարային տեսակետից Սարիի մանրատեղանվանագիտությունը ներառում է զուտ իրանական, ներառյալ՝ բարբառային և օտար փոխառյալ ձևերը: Սարիի մանրատեղանունների առանձնահատկություններից է այլաբանությունների օգտագործումը, որոնցից կիրառական հաճախականության տեսակետից առանձնանում են մարմնի մասերը, ինչպես օրինակ՝ sar «զուլխ» բառամիավորը, որի աշխարհագրական բովանդակությունն է «սկիզբ, ակունք, գագաթ, վերջնակետ», čašm «աչք»՝ «ջրափոս, լճակ, բացատ», հմմտ.՝ հյ. *ակն*, *gardāna* «պարանոց»՝ «նեղուց», հմմտ. թյ. *būqaz*, բովանդակությամբ և այլն: Պատմական միկրոանունները հիմնականում անձնանվանական կազմություններ են, այստեղ բնակություն հաստատած ցեղանուններից կազմված բնականուններ և այլն: Ուշ շրջանի

միկրոտոպոնիմներին բնորոշ է նկարագրական մեթոդի կիրառությունը: Բազմաթիվ են այն տեղանունները, որոնց վաղեմությունը հասնում է մինչև քսան տարի, որոնք անվանում են այս կամ այն հայտնի օբյեկտի նկատամամբ դրա գրաված դիրքով ու տեղաբաշխվածությամբ, օրինակ՝ Pošt-e Parvarešgāh «մանկատան ետևը», Pošt-e Ārāmgāh «գերեզմանոցի ետևը» և այլն:

Մանրատեղանունների շարքում քննարկվել են թաղամասերի, դարպասների, աղբյուրների, հրապարակների անուններ: Օրինակ՝ **Ālivāk** աղբյուրի անունը - 'Āli «լավագույն, բարձրագույն» ածականից և -vāk ձևույթից, որը տեղական բարբառներում, նաև՝ Իրանի կենտրոնական բարբառներում ունի «երիկամ» նշանակությունը: Միավորը ծագում է հ. իր. *w□dka- նախածնից (ավ. varəδka-), որտեղ տեղի է ունեցել բառավերջի -k ից առաջ -l- անկում (< *-rd-) և երկրորդական երկար -ā- ձայնավորի առաջացում (*valk > vāk), հմմտ. պիլվ. gūrdak, ն.պ. gūrde, քրդ. gūrčik (<*gūrd-čik) և այլն: Աղբյուրը ըստ ամենայնի նմանեցվել է երիկամի: Սարիում է գտնվում շիական Իմամ Ռեզայի քրոջ գերեզմանը, որի կողքին էլ գեղեցիկ մի աղբյուր: Այս աղբյուրը անվանում են **Češme-ye Doxtar Emām**, այսինքն՝ «Իմամի աղջկա աղբյուր»: Նման ծագում ունի նաև **Češme-ye Saysābedin** աղբյուրը, որն էլ կառուցվել է Իմամ Աբեդին գերեզմանի կողքին (seyed'ābedin > Saysābedin): **Češme-ye Yaxče Xoja** – այս աղբյուրը կոչվել է Yaxče Xoja-ի անունով, որ հայտնաբերել է և անասնապահությամբ է զբաղվել այս աղբյուրի մոտ: Անունն ունի թուրքական ծագում՝ Yaxče «լավ» և Xoja «պարոն», այսինքն՝ «լավ պարոն»: **Češme-ye Āxorsar** – այս աղբյուրը գտնվում է համանուն գյուղում, որ անվան համար էլ հիմք է ծառայել հենց աղբյուրի անունը: **Češme-ye Qolqolesar** – այս աղբյուրը գտնվել է Češme-ye Āxūrsar ից երկու հազար մետր տարածության վրա և գետնի տակից դուրս է ժայթքել մեծ ցայտերով, ինչն էլ հիմք է հանդիսացել այն անվանելու գոլգոլե «ղլղլացող»՝ բնաձայնական ծագմամբ: Իսկ բնակիչները պատմում էին, որ այն առաջացել է մի ժուժկալ, համեստ ու իմաստուն ծերունու ձեռնափայտի հանկարծակի հարվածից, որի հետևանքով աղբյուրը ուղղակիորեն դուրս է ժայթքել գետնի տակից: Սարիի հայտնի հրապարակներից մեկը, որը հիշատակել են նաև ճանապարհորդները, եղել է **Sabze Meydān**-ը՝ sabze «կանաչ» և meydān «հրապարակ»: Հրապարակը կանաչ է կոչվել գեղեցիկ ու առատ բնության համար: **Sizdah Pič** – այս վայրը, որը մոտ հիսուն տարի առաջ եղել է հրապարակ, այժմ վերածվել է նեղ մի կածանի, որից կարելի է անցնել միայն հեծանիվով: Իսկ Sizdah Pič է կոչվել տասներեք ոլորապտույտ ունենալու պատճառով՝ Sizdah «տասներեք» և -pič «պտույտ»:

Վ Ե Ը Ջ Ա Բ Ա Ն

Այսպիսով, ատենախոսության մեջ առաջ քաջված հարցերն ամփոփելով և հիմնական եզրակացություններն ի մի բերելով կարելի է նշել, որ՝

1. Իրանի իսլամական հանրապետության Մազանդարան նահանգի Սարի անվամբ աշխարհագրական տարածքի տեղանունների ուսումնասիրության ժամանակագրությունը սկսվում է 19-րդ դարից, երբ նշանավոր գիտնականներ Հ. Հյուբշմանը և Յ. Մարկվարտն իրենց հետազոտություններում քննության առան Իրանի և հարակից տարածքների մի շարք բնականուններ:
2. Սարի շահրեստանը՝ Սարի կենտրոնով, Իրանի հյուսիսային Մազանդարան նահանգի կենտրոնն է: Մազանդարանը ձգվում է Կասպից ծովի հարավային գոտու երկայնքով՝ մոտ 480 կմ երկարությամբ և 70-110 կմ լայնությամբ՝ 23756/4 քառ. կմ տարածքով: Նահանգի բնակչության թիվը մոտավորապես հասնում է երեք միլիոնի: Սարին հյուսիսում սահմանակից է Կասպից ծովին, հարավում՝ Էլբուրսի լեռնաշղթային ու Սեմնան նահանգին, արևելքում՝ Նեքա և Բեհշահր և արևմուտքում՝ Ղայեմ Շահր, Ջույբար և Սավադքուհ շահրեստաններին: Այն վարչականորեն բաժանված է հետևյալ մասերի՝ 5 շրջան՝ Կենտրոնական շրջան /Baxš-e Markazi/, Միյանռուդի շրջան /Baxš-e Miyānrūd/, Չհարդանգեի շրջան /Baxš-e Ārdange/, Դոդանգեի շրջան / Baxš-e Dodānge/, Քալիջան Ռաստադի շրջան / Baxš-e Kālījān-e Rostāq/, 15 դեհեստան, 5 քաղաք, 470 գյուղ, որից 24-ը դատարկ են, իսկ 446-ը՝ բնակեցված:
3. Աշխարհագրական այս տարածքում պատմական, էթնիկական ու լեզվական բարդ գործընթացներ են կատարվել՝ էթնիկական (էթնոլեզվական) խմբերի ու հանրությունների հերթագայում, միաձուլում, խաչավորում և այլն: Սարիի տարածքում նախաիրանական ցեղային կազմին հաջորդել է իրանական հանրույթը, որը դարերի ընթացքում ենթարկվել է տարբեր էթնիկ ու կրոնական միավորների ներխուժմանն ու ժամանակավոր յուրացմանը, որի ընթացքում էլ դրանք իրենց հետք են թողել այս տարածքի տեղանվանական համակարգի վրա: Ընդհանուր առմամբ Սարին մնում է իրանական հանրությամբ՝ մազանդարացիներով բնակեցված տարածք՝ գերակայող իրանական տարրով:
4. Սարիի տեղանվանական համակարգում հստակորեն տարրորշվում են նախաիրանական, գուտ իրանական և օտարածին շերտերը, որոնց ճշգրիտ ծագումնաբանական ու ստուգաբանական վերլուծությունը թույլ է տալիս որոշարկել, որ Սարիի տեղանվանական համակարգում գերակայում է իրանական շերտը: Թյուրքական, մոնղոլական, ինչպես նաև արաբական շերտի ներթափանցումը այս տարածքի տեղանվանական համակարգ պայմանավորված է պատմական իրադարձություններով և գերակշռող մաս չեն կազմում:

5. Մարիի տեղանունների լեզվագիտական ու պատմագիտական ուսումնասիրության համատեքստում դրանց բառակազմական ու իմաստաբանական քննությունը ցույց է տալիս, որ տարածքի բնականուններին բնորոշ է իրանական տեղանվանակազմական տիպը՝ վերջածանց տեղանվանակազմիչ ձևերի գերակայությամբ, իսկ նախածանցների դեպքում նկատելի է պարզապես նախածանցավոր կառուցվածք ունեցող գոյականի տեղանվանացման գործընթաց:
6. Մարիի տեղանունների հատկանիշային կազմության սկզբունքներն են՝ տեղանքի ֆիզիկաաշխարհագրական հատկանիշները, բուսանուններն ու կենդանիների անունները, էթնոնիմները, անձնանունները, տնտեսական երևույթները: Տեղանունների մի խմբի հիմքում էլ ընկած են պաշտամունքային եզրերն ու երևույթները, որոնց մեջ հատկապես մեծ թիվ են կազմում ուշ շրջանի անունները, որոնք արտացոլում են շիական եզրությաբանությունն ու սրբերի համակարգը:
7. Բառակազմության տեսանկյունից Մարիի տեղանունները բաժանվում են՝ պարզ, բարդ կամ հարադրավոր, ածանցավոր տեղանուններ, բաղադրյալ տեղանուն–բառակապակցություն:
8. Մարիի բարդ բնականուններում «վայր» մատնանշող և հաճախադեպ հիմնական բառացանկն է՝ šahr «քաղաք», deh «գյուղ», xāne «տուն», mahalle «թաղամաս», rostāq «գյուղ, ավան», mazārea «ագարակ, հերկած արտ», kūh «լեռ», dašt «դաշտ», čāh «ջրհոր», hoūz «ավազան», češme «աղբյուր», kāriḏ և kehrīz «ստորերկրյա ոռոգման ջրանցք», jūb «ոռոգման ջրանցք», tange «ջրանցք», մուսուլման սրբերի գերեզմանները, ուխտավայրերը, մզկիթները, դերվիշների ու շեյխերի մենաստաններն ու կացարանները անվանող ձևերը՝ emāmzāde «մարգարեի սերնդից որևէ մեկի դամբարան», ziārat «ուխտազնացություն», mazār «գերեզման», torbet «շիրիմ, դամբարան», tekīe «դերվիշի կացարանը», xāneqā/xānqāh/xāngā «դերվիշի ու շեյխի կացարանը», langar, zavīe, āsetane «գերեզման, շիրիմ, դամբարան, մենաստան», տիտղոսանիշ ձևեր՝ xān, emīr, mīrzā, pāšā, term, mullā, xāje, sardār, qāzi, soltān, āqā, emām, šeyx, pīr, hājī, seyyed:
9. Մարիի տեղանունների կազմության ամենակենսունակ բնականվանակերտ ձևությունները հետևյալներն են՝ -āb, -ābād, -ak, -ān, -bān/-vān, -bār, -bar, -ben, -čāl, -dān, -dar, -darre, -dašt, -deh, -gāh/-gah, -gar, -ik, -kəḷā/-kelā/-kolā/-qalā/-kalāya, -Kand, -keti, -keš, -kūh, -mahalle, -marz, -Rūd, -sār / -sar, -ū, -var/-vār, -verd, -xandaq, -xāne, -xāni/-xūni/-xānik/-xūnik, -xvār, -xvar, -xvāst, -xeyl: Մարիի բնականվանակազմության կարևոր առանձնահատկություններից է, որ իրանական բնիկ տոպոֆորմանսներից շատերը, չնայած իրենց տարածվածությանը

Իրանի ողջ տարածքում, այստեղ չեն հանդիպում, նշենք՝ -gerd/-jerd < h. իր. *kar- «անել, կառուցել» արմատի անցյալ դերբայի *k□ta-/karta- ձևից՝ «արված, կառուցած», -band/-vand < h. իր. *banda- < *band- «կապել» արմատից, -dār`daštan «ունենալ» բայի ներկայի հիմքը, «պարունակող, ունեցող, ընդգրկող» նշանակությամբ, -stān (պահլավերենում՝ -stān) ծագում է h. իր. *stāna- դերբայական կառույցից (*stā- «կանգնել, տեղակայված լինել» բայից):

10. Սարիի տեղանվանական համակարգը բնութագրվում է՝ ա)-kelā «ամրոց, բերդ, ամուր պաշտպանված վայր» նշանակությամբ տուպոֆորմանտով և հոմանիշ բառերով կազմված տեղանունների գերակշռող բազմաքանակությամբ՝ ինչը բացատրվում է այն հանգամանքով, որ բարձունքներում պաշտպանված ու ամրացված բնակավայրերը տարածված էին Մազանդարանում և նման անուններում բաղադրիչ մաս էին հանդես գալիս հիմնականում dež/diz, qal'e, kalāt, kalā/ kelā, kalak, kalāk, kalāte ձևերը, բ) բարբառային բառաձևերով կազմված տեղանունների առատությամբ՝ բուսանուններից ու կենդանիների անուններից, գ) զբաղմունքի ու արհեստների անուններով կազմված բնականունների առկայությամբ դ) շահրեստանում մեծ թիվ են կազմում ուշ, նկարագրական անունները, որոնք լեզվաբանական առումով մեծ հետաքրքրություն չեն ներկայացնում, ե) առանձին, բայց բավական սովոր հատված են կազմում էթնոտեղանունները, որոնք տալիս են տարածքի երբեմնի և ներկա էթնիկ պատկերը: Սարիի բազմաթիվ բնականուններից ու շենանուններից, որոնք մեծ մասամբ նորակազմություններ են, միայն մի մասի հին անուններն են հայտնի:
11. Սարիի տեղանուններում գերակայում են իրանական ծագման անունները, երկրորդն են՝ արաբական և երրորդը՝ թյուրքական անունները: Բավական թիվ են կազմում ուշ տեղանունները, որոնք նկարագրական բնույթի անուններ են: Տեղանվանական միավորները դասակարգելով ըստ ծագման և տարածման արեալի, ունենք հետևյալ պատկերը՝ ա) հնագույն շրջան-սուբստրատային նախաիրանական տեղանուններ, բ) հին շրջան-միջին իրանական ծագման տեղանուններ, գ) նոր շրջան (XI-XVIII դդ.)-պարսկական, արաբական և թյուրքական տեղանուններ:
12. Սարիի միկրոտոպոնիմիկան չի եղել առանձին ուսումնասիրության առարկա: Ժամանակագրական առումով փոքր բնակավայրերի անունները բաժանվում են պատմական և ուշ շրջանի կազմությունների: Բառապաշարային տեսակետից Սարիի միկրոտոպոնիմիկան ներառում է զուտ իրանական, ներառյալ՝ բարբառային և օտար փոխառյալ ձևերը: Սարիի միկրոտոպոնիմների

առանձնահատկություններից է այլաբանությունների օգտագործումը, որոնցից կիրառական հաճախականության տեսակետից առանձնանում են մարմնի մասերը, ինչպես օրինակ՝ *sar* «զուլա» բառամիավորը, որի աշխարհագրական բովանդակությունն է «սկիզբ, ակունք, գագաթ, վերջնակետ», *čašm* «աչք»՝ «ջրափոս, լճակ, բացատ», հմմտ. հյ. *ակն*, *gardāna* «պարանոց»՝ «նեղուց», հմմտ. թյ. *būqaz*, բովանդակությամբ և այլն:

13. Պատմական միկրոանունները հիմնականում անձնանվանական կազմություններ են, այստեղ բնակություն հաստատած ցեղանուններից կազմված անուններ և այլն: Ուշ շրջանի միկրոտոպոնիմներին բնորոշ է նկարագրական մեթոդի կիրառությունը: Բազմաթիվ են այն միկրոտեղանունները, որոնց վաղեմությունը հասնում է մինչև քսան տարի, որոնք անվանում են այս կամ այն հայտնի օբյեկտի նկատմամբ օբյեկտի գրաված դիրքով ու տեղաբաշխվածությամբ՝ *Pošt-e Parvaresgāh* «Մանկատան ետևը», *Pošt-e Ārāmghāh* «Գերեզմանոցի ետևը» և այլն:

ՀԱՎԵԼՎԱԾ

Ատենախոսությանը կից որպես հավելված ներկայացվում են Սարիի տեղանունների իրանական ծագման տեղանվանահիմքերի բառարանը և Սարիի բնականունների անվանացանկը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԵՂԻՆԱԿԻ ԳԻՏԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ

1. **Ահմադի, Ս.Ս.**, «Մազանդարանի տեղանվանական համակարգի ընդհանուր բնութագիրը», *Orientalia*, հ. X, ԻԿԿ, Երևան, 2010, էջ 1-3:

2. **Ահմադի, Ս.Ս.**, «Սարիի տեղանվանական համակարգի մազանդարաներեն բառաշերտը», *Orientalia*, հ. XI, ԻԿԿ, Երևան, 2010, էջ 11-14:

3. **Ահմադի, Ս.Ս.**, «Սարիի էթնոտեղանունները», *Orientalia*, Երևան, հ. XII, ԻԿԿ, 2011, էջ 71-74:

4. **Ахмади, С.А.**, «Возаи СОПИ дар “Сафарнома”-хо», Ахбори Академияи илмҳои ҷумҳурии Тоҷикистон, №3, «Дониш», Душанбе, 2010, сс. 69-71.

5. **Ahmadi, M.**, “Sari” City Terminology During History, *American Journal of Scientific Research*, Issue 14, 2011, p. 33-39

Сейед Мехди Ахмади

Топонимика Сари

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10.02.06 «ДРЕВНИЕ И СОВРЕМЕННЫЕ ЯЗЫКИ АЗИИ»

Защита состоится 30 апреля 2012г. в 14:00 часов, на заседании специализированного совета Языкознания 019, действующего в Институте языка имени

Гр. Ачаряна НАН РА (адрес: Ереван 0015, ул. Григора Лусаворича 15).

РЕЗЮМЕ

Представляемая диссертация посвящена изучению и классификации топономического система Сари, самого большого шахрестана северной провинции Ирана-Мазандарана.

Данная работа представляет собой опыт синхронно-описательного, диахронического и семантического анализа топонимики Сари. В работе определяется топономический тип Сари, которому весьма характерны суффиговые образования, дается слойный состав топонимики Сари, в который входят иранский, включая мазандаранский, арабский, тюркский, этнотопонимы и поздние топонимы.

Во **«Введении»** представлены объект и источники исследования. Подробно дается историко-географический обзор Сари, административное разделение, области и главные дехестани этого шахрестана.

Первые строго научные публикации, в которых делались попытки выявить некоторые общие закономерности формирования всей совокупности географических имен на территории Ирана, появились в первую половину XX века. В этих работах частично обратили внимание и на топонимов Мазандарана и Сари. Во введение приводится подробный обзор работ, посвященных изучению иранской и сарийской топонимики, включая новейшие публикации по данной тематике.

Первая глава – **«Семантический и структурный анализ топонимов Сарии»**, посвящена анализу семантических и словообразовательных типов топонимики Ирана.

В данной работе рассматриваются топонимы Сари, собранных автором в этом шахрестане. Как показывает собранный материал, это названия не только населенных пунктов, но и родников, перевалов и других микротопонимов (*Микротопонимы рассматриваются в третьей главе*).

В этой главе подробно изложен семантический состав топонимов Сари.

Существуют следующие семантические группы в топонимики Сари:

1. Названия, связанные с именами людей, родоначальниками;
2. Названия, указывающие на особенности окружающего рельефа и местного ландшафта;
3. Названия Названия, отражающие растительный мир;
4. , отражающие животный мир.
5. Квалификаты. В этот класс входят названия мест по самым разнообразным признакам: образные, описательные, по признаку уподобления и сравнения с другими предметами и т.д.
6. Названия, указывающие на предметы религиозного значения.

По своей структуре топонимы Сари являются односоставными и двух или трехсоставными. Односоставных топонимов немного, а большинство топонимов

составляют двухсоставные, основам которых прибавляются суффиксы. В работе синхронно-описательным и диахроническим методами рассматривается весь состав топоформантов топонимики Сари. Определяются суффиксы представляющие собой служебные форманты, употребляемые и в других слоях лексики, например ak/-āk, -ī и т. д.; исключительно топонимические суффиксы, например -bān/-vān и т. д., и, наконец, лексические единицы, функционирующие в качестве суффиксов, со утеренным или живым значением, например āb “вода”, -deh, -rostāq “село”, -xūnī/-xānīk/-xūnīk «источник» и т. д.

Во второй главе – «**Этимологический анализ топонимов Сари**», дается подробная картина языковой дистрибуции топонимов на территории Сари. Путем подробного изучения и анализа материала, выявлен тот факт, что наиболее древним и самым значительным слоем в топонимике Сари является **иранский**, включая местный-мазандаранский. Иранские названия отличаются многообразием словообразовательных средств и богатым лексическим материалом.

Но в топонимики Сари большое место занимают еще арабский и тюркский элементы, а в процессе взаимодействия образовались гибридные формы названий.

Мазандаран, в частности Сари, на протяжении многих веков являлось территорией, где соприкасались самые различные племена и народы. Среди доиранских народов, проживавших на территории Сари, надо упоминать амардов, или мардов, имя которых связан с топонимом Āmol, Amreh, и тапуров. С тапурами связано имя провинции Мазандаран, которая до XIII в. носила название Тапуристан. Арабы, тюрки, курды, барбари, цыганы, монголы – основные и наиболее многочисленные группы населения Сари, к которым восходит целый ряд **этнотопонимов** этого шахрестана. Этнотопонимы дают уникальный по своему значению материал о миграциях различных племен и народов на территории Сари, об их исторических связях и судьбах.

Небольшое количество составляют **поздние топонимы**, которые имеют описательный характер и называют населенные пункты например солдатов, рабочих какого-то завода и т.д.

Третья глава – «**Микротопонимы Сари**», посвящена анализу семантических типов родников, улиц, площадь и ворот Сари.

В «**Заключении**» диссертации приводятся выводы и подводятся основные итоги работы.

«**Приложение**» включает полный список топонимов Сари и словарь иранских лексем.

Seyyed Mehdi Ahmadi
The toponyms of Sari

A thesis for PhD degree in Philology, speciality 10.02.06,

The Ancient and Modern Languages of Asia (Iranian languages). The defence will take place on April 30, 2012 at 14⁰⁰ at the address 0015 Yerevan, Grigor Lusavorich St. 15 at the special session of the Linguistics Academic Council (N 019) of the Hrachia Acharian Institute of Linguistics.

Summary

The present dissertation is dedicated to the study and classification of toponyms of a northern province in Iran, Sari.

In the work a synchronic-descriptive, diachronic and semantic analysis of the toponymy of Sari is presented. For the toponymy of Sari suffixial formations are typical. The structure of the Sari toponymy includes elements from Iranian (such as Mazandarani), Arabic, and Turkic languages, as well as ethnotoponyms, and later toponyms.

In the **“Introduction”** the object and the sources of the research are presented, as well as a detailed historical-geographic survey of Sari, its administrative division, regions and main *dehestans* of this *shahristan*.

The first, strictly academic publications, in which attempts were made to line out the general regularities of the geographical names in Iran, appeared in the first half of the 20th century. In these works the toponymy of Mazandaran and Sari was also partly included. The “Introduction” is supplied with a detailed survey of the works dedicated to the study of the Iranian and Sari toponymy, including the latest publications on the topic.

The first chapter, entitled **“Semantic and Structural Analysis of the Toponyms of Sari”** is dedicated to the analysis of the semantic and word formation types of the place-names in the region. In the present work the place-names of Sari, collected by the author in this *shahristan* is discussed. As the recorded material shows, these are the names of not only townships, but also of springs, passes and other microtoponyms (the latter are discussed in the third chapter) in the area.

In this chapter the semantic structure of the place-names in Sari is analysed. The following semantic groups can be observed in the toponymy of Sari:

1. Names, derived from the ethnonyms;
2. Names, indicating to the special features of the surrounding relief and local landscape;
3. Names, reflecting the flora;
4. Names reflecting the fauna;
5. Qualifying terms; in this category the place-names based on the most different signs are included, such as figurative, descriptive, assimilative, and comparative.
6. Names, indicating to subjects of religious significance.

The toponyms of Sari are composed of one, two or three components. The amount of one-component toponyms is not big. The most part of the toponyms are two-

component and are formed by addition of suffixes. In the work with synchronic-descriptive and diachronic methods the whole structure of the topoformants in the toponymy of Sari is presented. Here the author discusses the suffixes serving as auxiliary formants, which are applied to other layers of the lexicon as well, such as *ak/-*, *āk*, *-ī* etc.; exclusively toponymic suffixes, for example *-bān/-vān*, etc.; and, finally, lexical units, functioning as suffixes, with lost or living meanings, such as *āb* “water”, *-deh*, *-rostāq* “village”, *-xūnī/-xānīk/-xūnīk* “spring”, etc.

In the second chapter, “**Etymological Analysis of the Toponyms of Sari**”, a detailed description of the language distribution of the toponyms in the territory of Sari is given. By detailed study and analysis of the material the author states that the most ancient layer in the toponymy of Sari is the Iranian one, including local Mazandarani. The Iranian names are distinctive with their variety of word formation means and rich lexical material.

Arabic and Turkic elements are another important part of the toponymy of Sari. In the process of interaction the hybrid forms of names have also appeared.

In Mazandaran, particularly in Sari, throughout the centuries most different tribes and peoples have been in contact with each other. Among the pre-Iranian peoples residing in Sari *Amards* or *Mards* can be mentioned (their name gave to Āmol, Amreh) and *tapurs*. The toponym Mazandaran is also connected with *tapurs*; before the 13th century the province was called *Tapuristan*. Arabs, Turkic peoples, Kurds, Barbars, Gypsies, Mongols are the main ethnic units of Sari, the biggest in number. A variety of **ethnotoponyms** goes back to the names of these peoples. The ethnotoponyms present a unique material on the migrations of different peoples and tribes in Sari, on their historical connections and destinies. **Later toponyms** make up the biggest part of the toponymy of the region; these have mostly descriptive nature and are mostly names of soldiers, workers of some factory, etc.

The third chapter, “**Microtoponyms of Sari**”, is dedicated to the Analysis of the semantic types of the springs, streets and gates of Sari.

In the “**Conclusion**” the main outcomes of the work are summarized.

The “**Appendix**” includes the whole record of the toponymy of Sari and a vocabulary of Iranian lexemes.